

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ՄՏԱԿՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ  
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

**ՈՐՈՇՈՒՄ**

№2022-3-6-Ա

ք. Երևան

28.02.2022թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2022 թվականի փետրվարի 28-ի նիստում քննարկեց 2022 թվականի փետրվարի 1-ին արտոնագրային հավատարմատար Ալեքսանդր Նահապետյանի կողմից ներկայացված՝ Gesellschaft mit beschränkter Haftung "Ehrmann" ընկերության (pos. RAOS, 15, Ramenskiy r-n RU-140126 Moscow Region, RU) «EPICA Crispy» (IR1531304) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 45-րդ հոդվածի 8-րդ մասի 4-րդ կետի համաձայն հայտարկված ապրանքային նշանը ենթակա չէ գրանցման, քանի որ Օրենքի 45-րդ հոդվածի 7-րդ մասի համապատասխան տարբերակիչ հատկություն չունեցող տարրի նկատմամբ բացառիկ իրավունքի հայտարկումից հրաժարվելու մասին ծանուցմանն ի պատասխան հայտատուն ներկայացրել է անընդունելի առարկություն: Տվյալ դեպքում «Crispy» բառն անգլերենից թարգմանաբար նշանակում է խրթխրթան և խնդրարկված 29-րդ դասի ապրանքաների համար, մասնավորապես՝ կաթ և կաթնային ապրանքներ, կարող է հանդիսանալ նկարագրական բնույթի նիշ, այն է խրթխրթան փաթիլների տեսքով հավելում հիմնական ապրանքին խառնած կամ հետոն օգտագործելու հնարավորությամբ, օրինակ՝ յոգուրտ, կեֆիր: Ինչպես նաև ցանկանում ենք տեղեկացնել, որ համապատասխան մոտեցում Գրասենյակը ցուցաբերել է դեռևս 1997 թ., որոնց մասին կարող են վկայել բազմաթիվ գրանցումներ, այն է՝ 29-րդ դասի ապրանքների համար «crispy» տարրին ինքնուրույն պահպանություն չի տրամադրվել, օրինակ՝ «THIN'N CRISPY» և «M&M'S CRISPY» ապրանքային նշանները:

Կոլեգիայի նախագահը հիմք ընդունելով «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի դրույթները բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքն ամբողջությամբ բավարարելու, կրկնական փորձաքննության որոշումն ամբողջությամբ չեղյալ ճանաչելու և

ապրանքային նշանը գրանցելու մասին, քանի որ հայտատուն ներկայացրել է հայտարարություն «Crispy» բառի նկատմամբ բացառիկ իրավունքից հրաժարվելու մասին:

Փորձաքննության բաժնի պետը նույնպես համաձայնվեց կոլեգիայի նախնական կարծիքի հետ:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում միաձայն.

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

Բավարարել արտոնագրային հավատարմատար Ալեքսանդր Նահապետյանի կողմից ներկայացված «EPICA Crispy» (IR1531304) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը, կրկնական փորձաքննության որոշումն ամբողջությամբ չեղյալ ճանաչել և ապրանքային նշանին իրավական պահպանություն տալ՝ «Crispy» բառին ինքնուրույն պահպանություն չտրամադրելով:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

**ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ**

**ՆԱԽԱԳԱՀ**

**ՌԱՖԱՅԵԼ ԳԵՎՈՐԳՅԱՆ**